

Երևանի հ. 62 ավագ դպրոց

Թեմա՝

Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝  
Արմինե Մանասյան

2014-2015 ուստարի

Դասն սկսում եմ Եղիշե Չարենցի բանաստեղծությամբ.

## Ա. Բ.-ին

...Եվ բառերի համար քո մարմարյա  
Հնամենի, բուրյան, որպես մեր հին  
Քարաքանդակ անդուռ մատուռների  
Անջնջելի գրերը հնադարյան,-  
Եվ մյուռոնի նման սրբազնագույն  
Քո երգերի մաքուր սկիհներում պահված՝  
Խորհուրդների համար մշտահմա...  
Որպես խորհուրդը մեր նախրական ոգու,  
Քո «Միրհավի» համար -ն լուսեղեն՝  
Արփենիկի հուշով սրբագործված հավետ,  
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,  
Որ բուրելու է հա՛ր աննյութեղեն...  
Այս ամենի համար, օ՛, ին՛ դ՛ իմ բարեկամ,  
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...  
Այս ամենի համար և քո եղերական  
Տառապանքի համար, որ արդ կրկին  
Վեհություն է խառնում քո անաղարտ երգին,  
Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական...  
Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ  
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,-  
Երբ դու ա՛յր էիր մի անարատ,  
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

Հարցնում եմ, թե ու՞մ մասին է Եղիշե Չարենցի այս բանաստեղծությունը:  
Պատասխանում են՝ Ակսել Բակունցի: Խթանման փուլում առաջարկում եմ  
«մարմարյա բառեր» ցույց տալու համար բաժանվել երեք խմբի՝ I, II, III և

ներկայացնել դարձվածքները, փոխաբերությունները, համեմատությունները և ժողովրդական խոսքի այլ միջոցները Ակ. Բակունցի ստեղծագործություններում: Նախօրոք հանձնարարված էր համապատասխան հանձնարարություն կատարել՝ Ակ. Բակունցի բառագանձը ուսումնասիրելով:

Կազմում ենք եռաթև աղյուսակ, և յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը և լրացնում աղյուսակը/Իմաստի ընկալման փուլ/:

*I խումբ- Դարձվածքները և հեղինակային /բակունցյան/ դարձվածքները Ակ. Բակունցի ստեղծագործություններում:*

Նշվել է, որ դարձվածքները Բակունցի լեզվի անբաժանելի բաղադրիչներն են, սովորական մասերը:

Օրինակներ՝ «Դարբին Վանեսը մեկնվել էր մեջքի վրա, այքքր գցել գառան չափի սպիտակ ամպին: Դարբինը ականջը կախել էր գրույցին:

Հերիք էր հիշողության տուտը բացվեր. կծիկը վերջ չուներ: Ետ կտար, ամեն մի հանգույցի մի պատմություն կաներ»/ «Կարմրաքար»/:

Կամ նույն տեղում կարող ենք կարդալ. «Միայն ինքը գիտե ուղիղ ճանապարհը:Իսկ նրանց ասածը՝ ինչպես անտառի արահետը թուխպ օրերին» /« Կարմրաքար»/:

Մեկ ուրիշ օրինակ՝ «Նա բարկացած կանչում էր հարսի վրա»/«Սպիտակ ձին»/, «Ալիքները ծառացան, դիզվեցին իրար վրա հրեցին և տան կտուրը չորեց», «...խողությունը ծանր էր»/«Կարմրաքար»/:

Նշված օգտագործված դարձվածքները Բակունցի լեզվին նոր իմաստ և կենդանություն են հաղորդում խոսքում:

*II խումբ- Ժողովրդական խոսքի այլ միջոցներ:*

«Կյորես»-ում մի տեղ որկրամոլությունը բնորոշվում է ժողովրդական խոսքով.«...արհեստավորների մեջ այնպիսի ուտոդներ կային, ինչպես Չաքմաչի Վեսկան, հյուսն Ասանը և թամբագործ Թևին, որոնք եթե երեքով միասին մակար գնային, հարսանքատիրոջ շունը սոված կմնար»:

«Կարմրաքար»-ում կարդում ենք. «Տաշտը դատարկ էր», օգտագործվել է «Հացը վերջացել էր» իմաստով: Կար մի այլ արտահայտություն, որը այստեղ նշանակում է հայ գյուղացուն և նրա կյանքն իմացող ամեն մեկի համար. «Ապրիլը եկել պատավի սրտով»/«Եղբայրության ընկուզենիները»/: Կամ «Հյումբաթի ձորի աստղը թեքվեց» արտահայտությունը նշանակում է հին Կյորեսի նահապետականության անկումը/«Հյումբաթի ձորը»/: Մի ուրիշ տեղ . «շարքը կրակի գին ուներ» արտահայտությունը նշանակում է թանկություն /«Վաղունց Բաղին»/, կամ «Զորբա» պատմվածքում ասվում է. «Զորբան աղաթի փեշից այնքան էլ կախված չէ», որը վերաբերում է Զորբա Օսեփի ավանդապահ չլինելու մասին:

III խումբ- Փոխաբերություններ և համեմատություններ:

Ներկայացնում է առանձնացված փոխաբերությունները. «...Այրումի առուն տրաքված գնում էր՝ ձորը բերնեբերան լցրած ջրով»,

«Մյուս պատն էլ երերաց, և կտուրը պիտի նստեր» («Կարմրաքար»)

«...հովը մի քիչ կոտրեց գերեկվա շոգը», «Վարժապետ Մինասը Թավրիզի ճամփան բռնեց» («Վաղունց Բաղին»):

Ահա համեմատությունների մի փունջ, որտեղ ներկայացվում են աշխատավոր հայ մարդու պատկերացումները, մտածելակերպը, գյուղացու շրջապատը, նրա կյանքի հետ կապված իրերն ու երևույթները՝ բակունցյան գեղջուկ հերոսների ոճով:

«Ժողովուրդը հետևեց նրանց աղի վրա գնացող ոչխարի պես», «...ուտքերը քաշ տալով ինքն էլ գնաց բոլորի հետ հոտից ետ ընկած կաղիկ ոչխարի նման» («Օրանջիա»)

«Գլխում մի հարց պտույտք էր անում, ինչպես կամը կալում»

«Արևը թեժացրել էր թիթեղյա կտորը, ինչպես թոնրի պատ» («Կարմրաքար»)

«...աչքերը ծերությունից չորացել, ճաքճքել էին ձմեռը ճյուղին մնացած ծիրանի նման» («Մայրը»)

«Սրահի կիսամութում փափախները մակադած ոչխարների պես էին, չիբուխների կրակները՝ խոտերի մեջ լույս տվող բզեզներ» («Հյումբաթի ձորը»)

«Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արյունը եռում էր իբրև թունդ գինի» («Միրհավ»)

«Բեղերը ոլորելիս թշերն ուռեցրեց գունա փչողի պես» («Օրանջիա»)

«Այսպես էր ասում վարժապետ Մինասը և ճառում, կոկորդը պատռում, կուրծքը ծեծում, ձեռքերը քամու ջաղացի թների պես շարժում օդի մեջ» («Վաղունց Բադին»)

Վերջում կշռադատում փուլում նշում ենք, որ Բակունցի լեզվի մի քանի առանձնահատկություններ առաջ բերելով պիտի ամփոփենք, որ Բակունցը ոչ միայն գեղարվեստի, այլև լեզվի միջոցով կերպարներին անհատականացնելու մեծ վարպետ է, և նրա լեզվի ժողովրդայնությունը մի ներդաշնակ ամբողջություն է, արձակ բանաստեղծային խոսք՝ համեմված ժողովրդայնությամբ: Շքեղ և համեղ աղբյուր է Բակունցի ստեղծագործությունը, որը ներկայացվում է ջինջ և անուշ խոխոջունով՝ բակունցյան սքանչելի լեզվով:

Վերջում հանձնարարվում է գրել շարադրանք՝ «Նամակ Բակունցին՝ լեզվի մեծ գիտակին» վերնագրով: